ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԱՂՔԱՏԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի աղքատի տղա մեռնըմ ա, հերը տերտերին կանչըմ ա, թաղիլ ա տալի։ Մի քանի վախտից եդը տերտերը գալիս ա թաղիլու հախը ուզըմ ա, սա էլ ասըմ ա.— Զատ չի ունեմ, տերտեր ջան, ի՞նչ տամ։
Տերտերն էլ կպել ու պոկ չի գտլի, էնքան գնըմ ա գալի ու էս մարթի տեղը նեղըմ ա, վեր էս մարդը էլ չգիտի, թե ինչ անի։
Վեր շատ նեղն ա ընգնըմ, ասըմ ա.— Տեր հայր ջան, էսքան դիմացել ես, մի քիչ էլ դիմացի, քու էրկու տղեն էլ կմեռնեն, ես կգամ ձրի կթաղեմ։